# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 94-Ա

### ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 15-ի թիվ 48-Ա որոշումը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04072017-07-0067) Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 4-րդ թաղամաս թիվ 6 հասցեում գտնվող 824,63 քմ ընդհանուր մակերեսով մանկապարտեզի շենքը 23,04 քմ մակերեսով կաթսայատունը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,2859 հա մակերեսով հողատարածքը անհատույց,անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Լիազորել Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հովհաննես Մարգարյանի, Լեռնանիստ համայնքի ղեկավարի անունից , օրենքով սահմանված կարգով, <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 18 թ. սեպտեմբերի 3
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 95-Ա

ԾԱՂԻԿՆԵՐ ԵՎ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով, 38 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. 01.6.1.51 /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ծրագրի 4261 /գրասենյակային ապրանքներ/ հոդվածից դուրս գրել 45000/քառասունհինգ հազար / դրամ գումար, ծաղիկներ և ծաղկեպսակ ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 10
գ.Լեռնանիստ